ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1951 Общественные науки

Ա. Դ. Հարախանյան

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Գրիգոր Արծրունին հայ հասարակական մտքի զարգացման մեջ ունի յուրահատուկ տեղ։ 19-րդ դարի 70—80-ական թվականներին նա առաջադրեց լիբերալիզմի մի ամբողջ «որոշակի դրական ծրագիր»՝ գիմադարձված հայկական կյանքում իշխող կղերականությանը, ռեակցիային։ Ի հակադրություն «Մեղու Հայաստանի»-ի և «Նոր-Դար»-ի, որոնք պրոպագանդում էին կղերապահպանողական իդեոլոգիան, Արծրունին պահանջում էր լիկվիդացնել միջնադարյան, ֆեոդալական հարաբերությունները իրենց կղերամտությամբ և սխոլաստիկայով, զարգացնել արդյունաբերական, արտադրողական ուժերը, երկիրը դուրս բերել հետամնացությունից ու քարացածությունից։ Պայքարելով ֆեոդալիզմի մնացորդների դեմ, նա պաշտպանեց աշխարհաբար լեզվի իրավունքը՝ ընդդեմ գրաբարի, բուրժուական դեմոկրատական սկզբունքները՝ ընդդեմ ֆեոդալական հարաբերությունների գլխավոր նեցուկի՝ եկեղեցու դիկտատուրայի։ Նա առաջադրեց կնոջ ազատության, անհատի ազատ զարգացման խնդիրը։ Արծրունին, ի հակադրություն ազգային պահպանողական հոսանքների, պաշտպանեց Եվրոպական կուլտուրայի և գիտության ազատ մուտքը մեր կյանքի զանազան բնագավառները։ Հնի դեմ հաղթանակ տանելու համար նա զորավիգ եղավ իրական, ժամանակակից կյանքը արտացոլող գրականության և թատրոնի զարգացմանը։ Նա երկար և համառ պայքար մղեց հայ ժողովրդի կոնսոլիդացման, հայության տարբեր հատվածների մերձեցման համար։

Ի տարբերություն պահպանողականների ազգային սահմանափակության և սնապարծության, Արծրունին եղավ ժողովուրդների, հատկապես Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության քարոզիչ, ազգային ազատագրական պայքարի ջերմ կողմնակից։

Պատահական չէ, որ Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ա. Ամիրյանը, և այլք, որոնք լավ գիտեին հայ հասարակական կյանքը և նրա մեջ պայքարող հոսանքները, միաբերան հավաստում են Արծրունու և նրա «Մշակ»-ի կատարած պրոգրեսիվ գերը։ Մեր ականավոր մարքսիստները նշում են, որ «Մշակ»-ը հարգված է եղել բոլորի կողմից և վիթխարի ազդեցություն է գործել հասարակական կյանքի վրա։ Ահա թե ինչ է գրում Բ. Կնունյանցը 1903 թ. արծրունյան շրջանի «Մշակ»-ի մասին. «Յուրաքանչյուր ազատ միտք, յուրաքանչյուր բարի լիբերալ ձեռնարկում, յուրաքանչյուր պրոգրեսիվ գործ իրեն կապում էր «Մշակ»-ի անվան հետ»։

Գր. Արծրունու քսանյոթամյա գրական գործունեությունը անրասիր չէ։ Նա ունեցել է ոչ միայն «սովորական», այլև արմատական սխալներ ու թերություններ, բայց այս հոդվածում մենք քննության առարկա ենք դարձրել միայն մեկ հարց՝ զարգացման, ավելի ճիշտ, հասարակության զարգաց-

ման վերաբերյալ նրա հայացքները, հույս ունենալով հետագայում վերադառնալու նրա ամբողջական գործունեության բնութագրմանը։

* * *

Շարժումը, զարգացումը, Գր. Արծրունու ըմբռնմամբ, ունիվերսալ բնույթ ունի, այն իմանենտ է ողջ գոյություն ունեցողին՝ բնությանը, մարդկային հասարակությանը, մարդու հոգևոր գործունեությանը։ Անշարժություն չկա և չի կարող լինել, և մարդկանց ձգտումը որևէ բան պահել անխախտ՝ նախապես դատապարտված է չիրականանալու։

«Երբ մենք սովորաբար ասում ենք այսինչ երևույթ, այսինչ հասարակություն, այդ ինչ անհատ, կամ՝ ազգություն անշարժ են,— դա ճիշտ չէ։ Բնության մեջ իսկապես անշարժություն չկա։ Ինչ որ անշարժ է երևում, նա այնուամենայնիվ մի հայտնի ուղղությամբ շարժվում է, որովհետև գնում է դեպի իր անկումը, դեպի իր կործանումը»[1]։

Շարժման, զարգացման տեսակետը Արծրունին որդեգրում է իր գործունեության հենց սկզբում. դեռ ուսանողական տարիներին գրած հոդվածներում նա վճռականապես դատապարտում է անշարժության, քարացածության ամեն մի ըմբռնում։

Շարժումը լինում է հետընթաց և առաջընթաց, բայց էականը առաջընթաց շարժումն է։ Անկումը և բարձրացումը, կործանումը և առաջացումը հավասարապես շարժման արդյունք են, հասկանալի են շարժման մեջ։

Ամեն մի փոփոխություն, զարգացում, առաջադիմություն շարժման մարմնացումն է։ «Մարդկային հասարակությունը, ինչպես բնության ամեն մի երևույթ, չէ կարող անշարժ մնալ, գոյություն ունենալու համար ամեն մի մարմին, ամեն օրգանական կազմվածք, ամեն հասարակական կազմակերպություն պետք է անընդհատ ներքին իր ուժերով»։

«Ընդունելով, որ ոչինչ նույն կետում կանգ առնել չի կարող, որ շարժումն ունի իր ալտերնատիվը՝ կամ կործանում կամ առաջադիմություն, Գր. Արծրունին մերժում է պահպանողականությունը, որպես ինչ-որ կոնցեպցիա։ Պահպանել եղածը, լինել գոյություն ունեցողի անփոփոխության կողմնակից, նշանակում է կամա թե ակամա դործել հետադիմության օգտին և սիրած երևույթը դատապարտել կործանման։ «Կյանքի մեջ ոչինչ չը կա անշարժ, և նրանք, որոնք իրանց պահպանողական կարծելով, պահպանում են և հասարակությունը անընդհատ անշարժության մեջ, չեն նկատում, որ այդ անշարժությունը ուրիշ բան չէ, եթե ոչ հետադիմություն, քայքայումն, կործանումն»[2],

Չի կարելի նկատի չառնել այն, որ Արծրունին շարժման, զարգացման իր ըմբռնումներով մի կոնկրետ նպատակ է հետապնդում՝ հարվածել հայկական կյանքում գոյություն ունեցող պահպանողականությունը, որ հանգում էր ֆեոդալական մնացորդների՝ կղերականության, եկեղեցու դիկտատուրայի, հին տնտեսաձևերի ու դրականության, կրթության հետամնաց վիճակի, բարոյական հին նորմաների պահպանմանն ու սրբացմանը։

Բնև Գ. Արծրունին բնության հետազոտող չէ, այլ հասարակական կյանքի ընթիչ, և նրան ամենից առաջ հետաքրքրում է հասարակական կյանքը՝ իր

[1] Գ. Ա., «Մշակ», № 211, 1878։
[2] Նույն տեղում № 116, 1886։
[3] Նույն տեղում։

առաջադիմությամբ, բայց նրա համար զաղտնիք չէ, որ բնությունը գտնվում է շարժման և զարգացման մեջ։ Լինելիությունը և փոփոխությունը բնության մեջ ամեն մի կասկածից դուրս է և Արծրունու համար աքսիոմատիկ բնույթ ունի։ Եթե բնությունը անընդհատ շարժման ու զարգացման մեջ է, հասարակական կյանքն էլ պետք է շարժման մեջ լինի, դատում է Արծրունին։ Հասարակությունը, ըստ Գր. Արծրունու, պետք է ենթարկվի բնության գոյության «անողորմ» օրենքներին։ Ինչպես բնության, այնպես էլ հասարակության մեջ անշարժությունը մահ է։ «Մշակ»-ի «Միշտ դեպի առաջ» առաջնորդողում Արծրունին գրում է. «Բնության մեջ չը կա և չէ կարող լինել անշարժություն, մի՞թե մարդը լինի դա մի անհատ, թե անհատների դումարումն՝ կարող է, իրավունք ունի, հնար ունի ապրել բնությունից դուրս։

Եթե բնությունը միշտ շարժման մեջ է, ժամանակն անընդհատաբար դեպի առաջ է գնում,— ուրեմն և մարդկային հասարակությունը չէ կարող չը հարմարվել բնության անողորմ օրենքներին, ժամանակի անխնա պահանջներին. և նա էլ, մարդկային հասարակությունը, պետք է միշտ և անընդհատաբար ձգտե դեպի առաջ։

Անշարժ մնալ, կանգնել, գուցե և հետադիմել, երբ ամեն բան՝ բնությունը և ժամանակը առաջ են գնում,— նշանակում է մեռնել, նշանակում է ինքն իրան մահվան դատապարտել, նշանակում է անձնասպանություն գործել»[4],

Միշտ նկատելով, որ շարժումը համընդհանուր երևույթ է, Արծրունին մեզ չի տալիս շարժման տեսակների մասին ոչ մի հասկացողություն, չի բմբռնում շարժման սպեցիֆիկան, երբ խոսում է բնության, հասարակության. մտավոր կյանքի զարգացման մասին։

Հնի դեմ մղվող կռվում Արծրունին կրքոտ է, անզիջում. նրա մոտ առաջադիմության համար պայքարը կատեգորիկ իմպերատիվի բնույթ ունի։ Ժամանակը առաջ է գնում, հայկական կյանքը հետ է մնում, այդ զայրացնում է Արծրունուն և զայրացնում է հատկապես նրա համար, որ հայկական կյանքում կային ամբողջ հասարակական խմբեր՝ խավարամիտներ և պահպանողականներ, որոնք ամբողջ ուժով կառչած էին հնին, նորը, ժամանակակիցը մերժում էին, զբաղված էին հնության որոճումով, փրկություն դարավոր հիշատակների անխախտ պահպանման մեջ էին տեսնում։ «...Կլանող հոսանքին դիմադրող ուժը պիտի լինի կրոնական, եկեղեցական, ընտանեկան, հասարակական առանձնահատկությունք, գրականությունը և լեզուն, յուր մարդուր ազդակի ոճով և դարձվածքներով, և մինչև իսկ հնությունը և արտաքին տարազները...»[5],— գրում է «Մեղու Հայաստանի» խմբագիր Պետրոս Սիմոնյանը։

«Մեղու Հայաստանին» հատու և պարզ արտահայտելով պահպանողական հայացքը, կարծում է, որ ամեն ինչ լավ կլինի, եթե եղածը անխախտ մնա, ոչինչ նոր բան մուտք չգործի հայ իրականության մեջ։

Պահպանողականների նպատակից դուրս է նկատել, որ ժամանակները փոխվում են, նորանոր պահանջներ են առաջ գալիս, և մարդիկ պետք է պատասխան տան, բավարարեն այդ պահանջները։

«Սֆինքսը ժամանակն է,— գրում է Արծրունին — որը միշտ առաջ է գնում.

---

[4] Նույն աղբյուր, № 1, 1891։

[5] «Մեղու Հայաստանի», № 3, 1886։

իր նոր մտքերով, իր նոր պահանջներով, իր լուսավորությամբ և առաջադիմությամբ... Նա մեզ անդադար նոր հարցեր, նոր պահանջներ է առաջարկում,— և եթե մենք չհետևենք նրան, չկատարենք նրա պահանջները,— նա մեզ կոլ կրտա, մեզ կտանի իր արագ հոսանքի ետևից... Ժամանակը առաջ է գնում, իսկ եթե մենք ուզենայինք միշտ միևնույն տեղի վրա անշարժ մնալ,— դորանով միայն մեզ կը վնասեինք»[5]։

Հայ ժողովրդի կյանքումն էլ, ասում է Արծրունին, շատ փոփոխություններ են կատարվել՝ սկսած չորրորդ դարից, երբ ընդունվեց քրիստոնեությունը, առաջ եկավ քրիստոնեական եկեղեցին։ «Փոխվել են և ժողովրդի նիստն ու կացը, ժողովրդի կենսական պահանջները, մարդկային հասարակության բարոյական և մտավոր աշխարհայեցողությունը, նրա բարոյական, հոգևոր և մտավոր ձգտումները...»[6]։

Ի հակադրություն պահպանողականների, որոնք ազգի գոյությունը տեսնում էին անշարժության և անփոփոխության մեջ, Արծրունին դատում է այսպես. մարդկային հասարակության բոլոր կազմակերպություններն ու հիմնարկները անընդհատ պետք է փոփոխվեն ու հարմարվեն ժողովրդի տվյալ ժամանակաշրջանի պահանջներին, արտացոլեն նրա նորանոր ձգտումներն ու ակնկալությունները. «...քանի որ երբեք չըսպիտի մոռանանք, որ մարդկային ամեն հաստատությունները մեզ համար, մեր երջանկության համար գոյություն ունեն, և ոչ թե մենք, մարդիկս գոյություն ունենք մեր մի անգամ ստեղծած հաստատությունների համար»[8]։ Այդ ըմբռնումն արդյունք է բարձր, հումանիստական մի համոզման։ Այդ համոզմունքը Արծրունու մոտ լեյտմոտիվ է։

Արծրունին ասում է, որ խավարամիտները մեզ անվանում են ամեն ինչ քանդող, իրենց մտավոր անզարգացածության շնորհիվ չհասկանալով, որ ոչինչ չի կարող մնալ անշարժ, աննորոգ, անփոփոխ վիճակում, եթե մարդիկ նույնիսկ փորձեն արգելք դնեն։ Մարդիկ չեն կարող արգելակել շարժումն ու առաջադիմությունը, նրանց մնում է ճիշտ ըմբռնել երևույթները, քար չդնել առաջադիմության անիվների տակ... Խավարամիտները «...կարծում են թե հնար կա որևէ բնական կամ հասարակական մարմին դարերով, նույնիսկ տարիներով միևնույն անշարժ դրության մեջ պահպանելու, կարծում են որ հնար կա որևէ մարմին իր բնական զարգացման աճման մեջ կանգնեցնելու, առանց վնասելու նրա գոյության, առանց նպաստելու այդ մարմնի ետագիմությանը, քայքայմանը և վերջիվերջո նրա լուծմանն ու ոչնչանալունը»։ Ինքնին հետևում է, որ հասարակության զարգացումը օբյեկտիվ բնույթ ունի և մարդիկ, վերջին հաշվով, անզոր են սրոգրեսը կանգնեցնելու մեջ։

Արծրունու կարծիքով հասարակական գործիչը, հասարակական օրգանը, մամուլը կարող է պահպանել իր դիրքը և կոչումը ու վայր չընկնել միայն այն դեպքում, երբ նա անկեղծորեն ցանկանում է ծառայել առաջադիմության գործին, անկեղծորեն հետևել հասարակական օգտին։

Շարժումն ու փոփոխությունը ոչ ժամանակավոր է, ոչ էլ սահմանափակ, այն ամենուրեք է և բացարձակ։ Շարժվում և փոփոխվում են բնությունը, բու-

[5] Գ. Ա., «Մշակ», № 38, 1873։
[7] Նույն տեղում, № 9, 1892։
[8] Նույն տեղում։
[9] Նույն տեղում, № 119, 1886։

սական և կենդանական աշխարհը, բուսական և կենդանական բոլոր տեսակները, երկրի մակերևույթը։ Փոխվում են նաև մարդու հոգեկան երևույթները, ազգերն ու ժողովուրդները, բնության և հասարակության մասին մարդկանց գիտելիքները։ «Եթե մենք քննական աչքով նայենք բնության երևույթների, թե մարդկության պատմության ընթացքի, թե անհատի հոգևոր կյանքի վերա,— մենք կհամոզվենք,— գրում է Արծրունին,— որ ոչ մի տեղ, ոչ օրգանական և ոչ անօրգանական բնության մեջ չկա անշարժություն։ Ոչ թե միայն բույսերի և կենդանիների կյանքի մեջ անդադար շարժում կա, ոչ թե միայն բույսերը և կենդանիները ծնվում են, մեծանում են և մեռնում են,— բայց և անօրգանական բնության մեջ նշմարվում է անընդհատ շարժում կամ կռիվ։ Քարերը օդի ազդեցության տակ անընդհատ հողմահարվում են (մաշվում են), երկրի մակերևույթը փոփոխում է իր ձևը և տեսքը, թե ջրերի, թե երկրագնդի ներքին կրակի զորության ազդեցությամբ։ Երկրագունդը շարունակ կերպարանափոխության ընթացքի մեջ է գտնվում»[10]։

Շարժման համայնապարփակությունը մատնանիշ անելով, Արծրունին այն չի ըմբռնում որպես միայն պարզ առաջխաղացում ժամանակի և տարածության մեջ։ Շարժումը ամենից առաջ կռիվ է, պայքար, որ տանում է անկատարից դեպի կատարյալը, պարզից դեպի բարդը և այդ հավերժորեն, առանց ընդատվելու։ «Որտեղ որ նայենք,— գրում է Արծրունին,— մենք ոչ մի տեղ, ոչ բնության, ոչ մարդկային պատմության երևույթների, ոչ կենդանիների կազմակերպության, ոչ ևս անօրգանական (անշունչ) բնության, ոչ մարդի հոգևոր կյանքի մեջ, չենք պատահիլ կատարելատիպերի (կատարելագործության), բայց ամեն տեղ կնկատենք մշտնջենավոր ձգտումն դեպի կատարելագործությունը»[11]։ Նկատենք, որ Արծրունին մերժում է կատարելությունը, վերջինս համարելով մահ։ Իրոք, եթե բնությունը և հասարակությունը մենք մի բոլոր պատկերացնենք «կատարելության» հասած, ուրեմն զարգացման հնարավորությունն էլ ոչնչացված կտեսնենք։

Բնությունը և հասարակությունը իրենցից կներկայացնեին կատարյալ անշարժությունների մի թանգարան։

Զարգացման, պրոգրեսի կողմնակից Արծրունին պահանջում է, որ փոխվեն նաև հասարակության մեջ գործող իրավական օրենքները, օրենսգրությունները, համապատասխանեցվեն հասարակության, մարդկանց փոփոխված, այլ դարձած պահանջներին, համապատասխան ժամանակի ոգուն։ Ամեն մի օրենսգրություն աչքի առաջ պետք է ունենա կյանքի բարօրությունը, մարդկային թե հավաքական և թե անհատական երջանկությունը. «բայց օրենսդրությունն անկարող է իր այդ նպատակին հասնել, եթե նկատի չառնի հայտնի ժամանակի հասարակական կյանքի պայմանները։ Բայց որովհետև մի որոշ հասարակության կյանքի պայմանները ժամանակի ընթացքում փոխվում են, դրա հետ միասին փոխվում են և հասարակական պահանջները,— ուրեմն հասարակական կյանքի պայմանների և պահանջների փոփոխության համեմատ՝ պիտի փոփոխվի, բարեփոխվի, կատարելագործվի և օրենսդրությունը»[12]։

Գր. Արծրունին զայրույթով դատապարտում է ռեակցիոներ Սերգեևսկու

[10] Գ. Արծրունու աշխատությունները, հ. 1, էջ 368 - 369։
[11] Նույն տեղում, էջ 369 - 370։
[12] Գ. Ա., «Մշակ», № 10, 1891։

«Наказание в русском праве XVII века» հենց նոր լույս տեսած աշխատությունը, այն համարում արսուրդ։ Սերգեևսկին իր դրքում քարոզում է վերականգնել «համապարտ պատասխանատվության» օրենքը, որը եղել է XVII դարում՝ Ռուսաստանում։ Սերգեևսկին գտնում է, որ երբ խարխլվում է կառավարողների հեղինակությունը, պետք է դիմել ամեն տեսակի, այդ թվում «համապարտ պատասխանատվության» միջոցին, այն վերականգնելու համար։ Նա առաջարկում է օրինակներ վերցնել նաև չինական պատժի հին ձևերից։ Սերգեևսկու կարծիքով չարագործին չգտնելու դեպքում հարկավոր է նրա մերձավորներին պատժել, մահվան դատապարտել՝ սաքսավ տարածելու՝ կառավարվածների աչքում կառավարողների հեղինակությունը անխախտ պահելու համար։ «Ավելի մեծ և հրեշավոր արսուրդին կամ անմտության չէր կարող հասնել ուսումնական իրեն անվանող մարդը»[13],— եզրակացնում է Գր. Արծրունին։

Արծրունին ասում է. նոր լույս տեսած գրքի մասին շարժեր խոսել «...եթե այդ գիրքը իր ուղղությամբ չը ներկայացներ մի հայտնի ետադեմ նեղ շրջանի ոգին ու ձգտումները, որոնք այժմ հետզհետե տիրապետող են դառնում մեր գիտության մեջ»[14]։ Պարզ է, որ Արծրունու զայրույթը չի ուղղված միայն Սերգեևսկու, այլ հետադիմության, հետադեմ գիտնականների, ըստ էության կառավարողների շահերը արտահայտող, գոյություն ունեցող իշխանության ամրապնդմամբ տոգորված, իշխանությունների առաջ ստորաքարշություն անող մարդկանց ամբողջ խմբի դեմ։

Արծրունին կռվելով ֆեոդալական, արսոլյուտիստական անցյալ ժամանակների կամայականությունը վերածնել ցանկացող Սերգեևսկու դեմ, ելնում է բուրժուական դեմոկրատիայի դիրքերից։ Նա խիստ դատապարտում է այն իրավաբաններին, որոնք օրենսդիրքը ձեռներն առած, կյանքը գտնում են նրա մեջ։ Օրենքի ուժով կարող է այս կամ այն երևույթը «վերացված» լինել և կամ «հաստատված», բայց իրականում՝ մնա կամ չքանա, ասում է Արծրունին։ Օրենքով վերացված էր ճորտատիրությունը, բայց իրականում նա մնում էր ուժի մեջ։

1861 թ. փետրվարի 19-ին, գրում է Գր. Արծրունին, ցարը մանիֆեստով վերացրեց Ռուսաստանում ճորտությունը, բայց այդ բնավ էլ չի նշանակում, որ ճորտությունը վերացված է, չկան ճորտեր և կալվածատերեր՝ իրենց տնտեսական, բարոյական հարաբերություններով։ Նկարագրելով Ռուսաստանի սոցիալական պատկերը, երբ ժողովրդի կեսը կատարյալ ստրուկ էր, կեսը՝ ստրկատեր, նշելով ճորտերի ազատագրման օրենքը, Արծրունին դրում է. «Ռուս հասարակությունը այս բոպեիս դեռևս բաղկացած է երեսուն տարի սրանից առաջ իրար թշնամի եղած երկու հզոր ուժերից, որոնցից մեկը նոր է կորցրել իր ստրկատիրոջ իրավունքը, իսկ մյուսը նոր է ձեռք բերել իր քաղաքացիական իրավունքները»[15]։ Բայց «...օրենքի խոսքը չէ կարող դյուրական զորությամբ երեսուն տարվա կարճ միջոցում բնաջինջ անել դարավոր ավանդությամբ արմատացած գաղափարներն ու կյանքի եղանակը»։ Արծրունին ռեալիստ մտածող է, նա օրենքը և իրականությունը չի նույնացնում։ Նա պայքարում է այն օրենքների դեմ, որոնք հասարակությանը տանում են դեպի հետ, խոչընդոտում են առաջադիմական շարժումը, պրոգրեսը։ Եզրակացությունը

[13] Նույն տեղում, № 31, 1888։

[14] Նույն տեղում։

[15] Նույն տեղում, № 23, 1891։

մեկ է՝ օրենքները պետք է այնպիսին լինեն, որ նպաստեն ճորտատիրության վերացմանը։

Գիտությունն էլ չի կարող կանգ առնել ձևոր բերված աստիճանի վրա, նա էլ պետք է ավելի ու ավելի կատարյալ դառնա, որովհետև «Առաջադիմությունը, այսինքն անդադար ձգտումն դեպի կատարելագործության ամեն մի հասարակական էակի, ամեն մի հիմնարկության, ամբողջ պետությունների անհրաժեշտ, մահու ու կյանքի պայմանն է»[16],— եզրակացնում է Արծրունին։

Մենք առայժմ շարադրեցինք շարժման, զարգացման մասին Արծրունու մի բանի մտքերը։ Հարց է առաջ գալիս, ի՞նչ ուժ է շարժման մեջ դնում ամբողջ գոյություն ունեցողը—բնությունը և հասարակական կյանքը, մարդկային միտքը և գիտությունը։ Այդ հարցի պատասխանը կարևոր է մտածողի փիլիսոփայական աշխարհայացքը բնութագրելու համար։ Մի բան հայտնի է, որ երբեք և ոչ մի առիթով Արծրունին չի դիմում բնությունից, հասարակությունից դուրս գտնվող որևէ «ուժի» և ոչ էլ ակնարկում աստվածային պոտենցիան, արարչագործական ակտը։ Բայց մենք նկատեցինք, որ ըստ Արծրունու, երկրագնդի մակերևսի փոփոխությունները կատարվում են հողմնահարման և ներքին կրակի զորության ազդեցության տակ, բուսական և կենդանական տեսակները փոփոխվում են իրենց ներսում ունեցած շարժման, «կռվի» միջոցով, հասարակական կյանքում պահպանողականության և առաջադիմության միջև եղած պայքարի միջոցով և այլն և այլն։ և «...չկա կյանք առանց նյութի անդադար փոխանակության»[17]։ Շարժվողը և զարգացողը նյութն է, նյութական աշխարհը։ Բնությունը և հասարակությունը նյութական է, շարժումը նյութի շարժումն է. այս է Արծրունու մտքերի ընթացքը։

Արծրունին պահանջում է, որ կյանքում ամեն ինչ վերանորոգվի, հնի հնացածի փոխարեն նորը հանդես գա, բանդելու հետ միասին նորը շինվի. բայց ի՞նչ ձևով, ի՞նչ եղանակով։ Հին ոչնչացնել ռևոլյուցիոն եղանակով. կենտրոնացած հարվածով, միանգամից. թե՞ հնի մեջ նորը ներառնելով. հին վերանորոգելով, աստիճանաբար թարմություն մտցնելով։ Արծրունին կանգնած է վերջին տեսակետի՝ էվոլյուցիոն տեսակետի վրա։ Նա մերժում է ռևոլյուցիան, նա բացասում է «արյունոտ» ռևոլյուցիաները հասարակական կյանքում։ Նա կողմնակից է բռնության դեմ պայքարելուն, նա կանգնած է ազատության կողմը, գրվատում է ազատությունը, բայց կարծում է, որ ազատությունը միանգամից չի կարող գալ. ազգերն ու ժողովուրդները բռնությունից ազատության անցնել չեն կարող միանգամից, ռևոլյուցիայի միջոցով։ Այդ անումը հնարավոր է աստիճան առ աստիճան, հին վերանորոգելով, նորին նախապատրաստվելու միջոցով։ Ռևոլյուցիայի մասին նա դատում է բուրժուական մտածողների շրջանում մինչև օրս էլ լայն շրջանառություն ունեցող հակագիտական այն բմբռնման համաձայն, որ իբրև թե ռևոլյուցիան միայն բռնություն է. «Առհասարակ դժվար է, անհնարին է ամեն ժողովրդի համար առանց փորր առ փորր պատրաստվելու, առանց աստիճան առ աստիճան զարգանալու և վերանորոգվելու, միանգամից անցնել ամենածայրահեղ բռնությունից դեպի ազատ քաղաքական ինքնավարության ձևը...»[18]։

[16] Նույն տեղում, 30 1872։
[17] Նույն տեղում, № 34, 1873, ընդգծումը մերն է Ա. Բ.։
[18] Նույն տեղում, № 18, 1877։

Արծրունին օրգանական ատելություն տածելով դեպի ամեն կարգի բռնությունը, չհասկացավ, որ սոցիալական ռևոլյուցիան ոչ միայն բռնությունն է, այլև ազատության արմատական միջոց։ Նրա կարծիքով ագգերը չպետք է խանգարեն իրար բռնի միջոցներով. Ոչ թե բռնությունը, այլ ազատ մրցությունը պետք է լինի առաջադիմության միջոցը։ Ամեն մեկը զարգանալով, թույլ պիտի տա զարգանալ նաև մյուսին։ Այլ խոսքով՝ Արծրունին քարոզում է՝ ապրիր և ուրիշին էլ թույլ տուր ապրել։ «Սա նատուրական սկիզբն է (սկզբունքն — Ա. Բ.), սա ազատ մրցության սկիզբն է»[19]։

Դեմ լինելով անարդարության և բռնության վրա հիմնված կարգերը ռևոլյուցիոն ճանապարհով վերացնելուն, այնուամենայնիվ նա չի քարոզում անտրտունջ քարշ տալ իր գոյությունը, համաձայնվել գոյություն ունեցող դրության հետ։ Մի մարդ, որ կանգնած էր պրոգրեսի կողմում, այդ իրեն թույլ տալ չէր կարող, այլապես նա պետք է ֆատալիզմի դեմ կռվողից ֆատալիստ դառնար և պահպանողականության դեմ կռվողից՝ պահպանողական։ Արծրունին պիտակցում է, որ «Ո՛չ, մարդը երբեք չի գրկի իրեն մի իրավունքից։ Ճորտատերերը երբեք իրանք չեն ազատում իրանց ստրուկներին, մինչև որ տերությունը չի ստիպի նոցա այդ անելու, կամ իրանք ապստամբված ճորտերը»[20]։ Արծրունին գտնում է, որ չի կարելի առկա վիճակից գոհ լինել։ «Դժգոհությունը առաջադիմության մղողն է», առաջնորդողում նա գտնում է, որ միայն ֆիզիկապես թույլ, բարոյապես անհաստատ, մտավորապես բնական ընդունակությունները կորցրած, փչացած, բթացած սերունդը կարող է իր վիճակից գոհ լինել, բավարարվել իր դրությամբ։ Եթե մուրացկանը գոհ լիներ իր ցնցոտուց, բանվորը իր հաց ու պանրից, ուսում առած կարծեցյալը՝ իր տգիտությունից, նա միշտ կմնար անշարժ։ Սա առաջադիմության կոչ է, առանց պայքարի կոնկրետ միջոցները ցույց տալու։ Արծրունին ասում է՝ «Մենք չենք տեսնի մեր դժգոհության արդյունքները, բայց ճանապարհ կբացենք ապագա սերունդների համար»։

Մելիքդաղես (Բաֆֆի) նույն ոգով է հանդես գալիս։ Նա «Ինքնախարեություն» հոդվածում հայերի թերությունն է համարում այն, որ նրանք ինքնախարեության մեջ են, միշտ լավն են տեսնում, չգիտեն, չեն տեսնում իրենց (ազգի) թերությունները, ինքնաճանաչողությունից զուրկ են։

Առաջադիմությունը միայն նորը ստեղծելով չի սահմանափակվում։ Եթե նորը հոգացողության առարկա չլինի, պարբերաբար չնորոգվի, չհղորացվի, նա կրնկնի, կանհետանա։ Վերանորոգումը պետք է տեղի ունենա ժամանակի պահանջը հաշվի առնելով. «Ստեղծել բավական չէ, պետք է նույնպես պահպանել, անդադար վերանորոգել ստեղծածը։ Այդ բավական չէ, պետք է անդադար վերանորոգել ժամանակի պահանջին համեմատ»[21]։

Արծրունին ասում է, եթե մի հիմնարկություն է առաջ գալիս, ասենք 1825 թ., և չի վերակառուցվում տվյալ ժամանակի պահանջներին համապատասխան, չի վերանորոգվում, ժամանակի ընթացքում անախրոնիզմ է դառնում, իր նպատակին չի կարող ծառայել, կոչնչանա։ Իր ասածը հիմնավորելու համար օրինակ է բերում. ինչպես ամեն մի կազմվածք կարելի է պահպանել

[19] Նույն տեղում, № 23, 1874։
[20] Նույն տեղում, № 19, 1872։ Ընդգծումը մերն է — Ա. Բ.։
[21] Նույն տեղում, № 184, 1878։

ամենն օր նրան նոր սնունդ տալով, «...այնպես էլ մարդկային կազմակերպված հասարակության, ազգի գոյությունը պահպանելու համար պետք է անընդհատարար առաջարկել, պատվաստել նրան, մտցնել նրա կյանքի մեջ նոր մտքեր, նոր իդեալներ, նոր ուժեր, նոր տարրեր, նոր երևույթներ, նոր հաստատություններ, նոր հասարակական կազմակերպություններ... Իսկ դրա համար, այսինքն նորը մտցնելու, նորը իրագործելու համար, նախ և առաջ պետք է անդադար հետազոտել, քննադատել հինը, վերացնել այդ հինը և նրա տեղը անդադար նորը դնել։ Այն բոպեից, երբ կդադարեք այդ անել,— կյանքն էլ ինքն իրան կդադարի հասարակական կազմակերպության մեջ, ինչպես օրգանական մարմնի մեջ կդադարի կյանքն այն օրից, երբ դուք կատարելապես կդադարեք այդ մարմնին որևէ կերակուր տալուց»[22]։

Մեկնելով այդ տեսական ըմբռնումից, Արծրունին գտնում է, որ հին աշխարհի ստրկատիրական պետությունների կործանման պատճառներից մեկն էլ այն էր, որ նրանք ավելի շատ սպառում էին, քան նորն ստեղծում. նրանք անխնա կերպով օգտագործում էին հողը, մարդկանց, ստրուկների էներգիան և հող չէին տանում այն բարելավելու համար։ Նոր աշխարհը, գրում է Արծրունին, «...ստիպված է անդադար վերականգնելու սպառված ուժերը, հասկանալով բնական, օրգանական օրենքը, որ չկա կյանք առանց նյութի անդադար փոխանակության»[23]։ Այդ նոր աշխարհը ժամանակակից, քաղաքակիրթ աշխարհն է։ Եվ ահա հայերն էլ, որպես քաղաքակիրթ ժողովուրդ, պետք է սպառելուց բացի, ստեղծեն, քանդելուց բացի, շինեն։

Արծրունին տեսական դրույթներից գործնական եզրակացություններ է հանում։ Նրան չի բավարարում գոյություն ունեցողը։ Նա առաջարկում է փոխել, վերափոխել այն ամենը, ինչ հնացած է, որ դարն ապրած, ժամանակավրեպ։ Հենց դրա համար էլ հակառակորդները նրան անվանում էին քանդող, հայկական կյանքի դարավոր հիմքերն ու տրադիցիաները ոչնչացնող։

Արծրունին մեղադրում է հայ պահպանողական մամուլը, որ քարոզում է հինը, որպես կրթության ու դաստիարակության միջոց, և ընդօրինակման արժանի առաջարկում է մեր պատմության միայն վաղ շրջանը։ Պահպանողականները անհաշտ էին նորի հետ, համարելով այն օտարամուտ, այլատարր, այլածին՝ հայկական ոգուն անհարազատ, ուրեմն և մերժելի։ Պահպանողականները, գիտակցաբար, հանուն հայկական կյանքի ատրիբուտների անխտրն ու անքթար պահպանման, դեմ էին գնում զարգացմանը, իրականում արգելակում էին առաջադիմությունը։ Արծրունին իրավացի է, երբ նրանց ուղղությունը բացասական է համարում։

Պահպանողականները իրոք չառաջադրեցին հայկական կյանքում գոյություն ունեցող հիմնարկների, բարոյական նորմաների, լեզվի, ոճի, կրթության ու դպրոցի, դաստիարակության, եկեղեցու ոչ մի փոփոխություն։ Պահպանել եկեղեցին, ինչպես որ կա, պահպանել «աստվածային» գրարարը (երբ նույնիսկ իրենք հարկադրված էին գրել աշխարհաբարով), կազմում էր նրանց հավատանդամանակը։ «Մեր հասարակական կյանքի դեկավարները,— ասում է Արծրունին,— ուզում են որ ազգը գարերով մնա միևնույն անշարժ դրության մեջ,

---

[22] Նույն տեղում, № 116, 1886։

[23] Նույն տեղում, № 34, 1873։ Ընդգծումը մերն է - Ա. Ի.

ունի այն մտավոր ու հոգեկան սնունդով, որ նա ընդունել է մի ժամանակ, այն է երրորդ, չորրորդ կամ հինգերորդ դարում»[24]։

Ինչպես նկատել ենք, Արծրունին ողջ օրգանական և անօրգանական աշխարհը դիտում է շարժման, զարգացման, «կռվի» մեջ։ «Կյանքը՝ կռիվ է, մաքառումն է հնարավոր երջանկության համար, ամենաանհրաժեշտ մարդկային իրավունքների համար, հնարավոր նյութական բարօրության համար. կյանքը մշտական կռիվ է թե մասնավոր և թե հավաքական առաջադիմության համար. կյանքը անընդհատ ձգտումն է դեպի լույսը, դեպի լուսավորությունը»[25]։

Երջանկության, մարդկային իրավունքների և լուսավորության համար պայքարը տեղի է ունենում հնի և նորի միջև։ Հինը և նորը անհաշտ են իրար նկատմամբ. հնի հաղթահարման համար պետք է կանգնել նորի կողմը, «...հնի դեմ մաքառելու, պատերազմելու համար՝ պետք է հայտնել նորը, որպեսզի հինը նորոգվի. անշարժությունը չարժում դառնա, մեռելությունը կյանք դառնա...»[26]։ Արծրունին ասում է՝ միայն հինը քարոզողները կարող են համերաշխ լինել հասարակության հետ, իսկ նորը քարոզողներին վիճակված է կռվել։

Հնի ու նորի միջև պայքարը հավերժական է։ Նորի երևան գալը և հաղթանակը, պրոգրեսը այդ պայքարի արդյունքն է։ «Ոչինչ նորը չէ կարող ձեռը ձեռքի տված հինի հետ ընթանալ։ Հասկանալի է, որ մեր չորս տարվա գործունեության մեջ մենք պետք է բացարձակ պատերազմ հայտնենք հին սերունդին»[27],— գրում է Գր. Արծրունին։

Հնի և նորի միջև բացարձակ, անհաշտ պայքարը չի ժխտում նրանց միջև եղած կապը։ Երբ հինը իր զգայի մասով մտնում է նորի մեջ, նախապատրաստում է նորը, նորը իր հերթին բոլորովին չի մերժում հինը, այլ մասամբ մերելով՝ կատարելագործում է անցյալը։ Մյուս կողմից՝ ներկայի մեջ կան նոր երևույթներ, ծնվում և առաջ են գալիս նոր տարրեր, որ բոլորովին չկային անցյալի, հնի մեջ։ «Թեև ըստ երևույթին անցյալը մեծ մասով չէ համաձայնվում ներկայի հետ, բայց գարձյալ մեծ կապ կա նոցա մեջ. անցյալը պատրաստում է ներկան, իսկ ներկան կատարելագործում է անցյալը, բոլոր, ինչ որ կար անցյալում, կ՚գտնվի և ներկայի մեջ,— բայց շատ բաներ պիտի ծնվեն ներկայում, որոնց չէր ճանաչում անցյալը... Նոր սերունդը հին սերնդի հետևանքն է»[28]։ Իր հերթին,— գրում է Արծրունին,— «...յուրաքանչյուր հասարակություն պիտի նայեն ապագա սերունդի վրա, որպես իր շարունակողի վրա»[29]։

Հին վերացնելու և նորը առաջարկելու համար պետք է քննադատել և այն։ խստությամբ քննադատել կյանքի հնացած ձևերը, առաջադիմությունը խոչընդոտող վնասակար երևույթները, որպեսզի ծնվի նորը, որպեսզի գրականության, կյանքի մեջ առաջ գա խիստ, անխնա, քննող, մտրակող ուղղություն։ «Բայց ուրիշ կերպ անկարելի է,— գրում է Արծրունին,— մի ազգի, մի հասարակության բարոյական, հոգեկան և մտավոր վերածնության դարագլուխը սկսվում է միշտ խիստ և անխնա ինքնաքննությամբ»[30]։

[24] Նույն տեղում. № 116, 1886։
[25] Նույն տեղում. № 1, 1891։
[26] Նույն տեղում. № 50, 1890։
[27] Տե՛ս «Մշակ», № 13, 1873։
[28] Գրիգոր Արծրունու աշխատությունները, հ. 1, էջ 237։
[29] Տե՛ս «Մշակ», № 34, 1873։
[30] Նույն տեղում, № 116, 1886։

Ի՞նչպես հասկանալ հնի դեմ կռիվը, մաքառումը, որ մշտապես պիտի տեղի ունենա։ Հին պետք է ոչնչացվի՞ բացահայտ կռվում, ուժով արմատախի՞լ արվի։ «Չ։ Արծրունին հավատարիմ վերանորոգման, քայլ առ քայլ հաղթահարման իր թեորիային, առաջարկում է նույնիսկ չանիծել հին, թշնամություն չանել հնի հետ, այլ մրցել, քննադատել։ «Փոխանակ ուրիշների արդյունքը ոչնչացնելու, ես կարող եմ մրցություն հարուցանել...»[31],— գրում է նա։

Այդպես էր ասում Արծրունին իր գործունեության սկզբում, մինչմշակյան շրջանում։ Հետագայում էլ նա չհրաժարվելով ազատ մրցության գաղափարից, որպես պրոգրեսի միջոց, զանգատվում է, որ մեզ մոտ դեռ չկա դրա հնարավորությունը, որ դեմ առ դեմ մենք կանգնած ենք եսասեր հին սերնդին, որ հասարակության շահ, առաջադիմություն չի հասկանում։ Մեզ մոտ չկա խելացի եսականություն։ Մարդը չի հասկանում, որ մտածելով ուրիշի մասին, մտածում է և իր մասին։ Նա անտարբեր է ուրիշների ցավերին ու կարիքներին, նա չի մտածում ճահիճը ախտահանելու, չորացնելու մասին. ճահճի մեջ ապրելով նա մտածում է միայն իր տունը ախտահանելու մասին, նա չի օգնում ուրիշներին՝ միասին պայքարելու խոլերայի դեմ, նա աշխատում է միայն իրեն դերծ պահել վարակից, չհասկանալով, որ եթե շրջապատդ աղտոտ է, դու էլ փրկվել չես կարող։ Երբ մարդը հոգում է ուրիշների մասին, նա դրանով հոգում է և իր մասին, իսկ երբ անտարբեր է դեպի ուրիշների ցավերը, նա դրանով վերջիվերջո վնասում է և իրեն։

«Շմարիտ բարեգործությունը հիմնված է խելացի եսականության վրա, իսկ անտարբեր եսականությունը՝ ամենից շատ վնասում է նույնիսկ դեպի ուրիշները, դեպի մեծամասնությունը անտարբեր, անփույթ կերպով վերաբերվող մարդկանց»[32]։

Ահա ինչու թեև «Ազատ ցանկություններ շատ գեղեցիկ բան է զարգացած, բազաքակիրթ, իրավահավասարության բարձր աստիճանի հասած հասարակության մեջ»[33], բայց մեզ մոտ, ուր բանական եսասիրության փոխարեն իշխում է մոլի եսականությունը, դժվար է մրցությամբ առաջ գնալ, պետք է անողորմ, մտրակող քննադատություն։

Հնի դեմ պայքարում Արծրունին տեսնում է մեծ դժվարություն։ Նա նկատում է, որ խաղաղ մրցակցությունը անհրաժեշտ է, անհրաժեշտ է քննադատությունը, բայց ինչ անել, երբ հինը տեղի չի տալիս նորին այդ միջոցներով։ Այդ իսկ հանգամանքից ստիպված, Արծրունին էլ ավելի վճռական շեշտ է դնում հնի դեմ իր պայքարում։ Նա գտնում է, որ երբ հին հաստատությունները ու հիմնարկները ժամանակի պահանջների համեմատ վերանորոգվել չեն ուզում, կամ չեն կարող և դիմադրում ու խանգարում են հասարակությանը, ազգությանը ապահովել իր երջանկությունը, «նրանք իսպառ պետք է անհետանան», հասարակությունը պետք է ազատվի «մեռնող հաստատությունների մեռցնող ազդեցությունից», որպեսզի հնարավորություն ստանա մասնակցել բազաքակրթության ընդհանուր գործին։ Արծրունին ասում է, «Մշակը» այդ հասկացավ և շարունակ իր կարողության չափ անողորմ քննադատության էր ենթարկում հայոց հասարակական կյանքը, հայի այն բոլոր հասարակական

[31] Գ ր ի գ ո ր Ա ր ծ ր ո ւ ն ու աշխատությունները, հ. 1, էջ 260։
[32] Գ. Ա. «Մշակ», № 143, 1888։
[33] Նույն տեղում, № 61, 1886։

հաստատությունները, որոնք դարերից ի վեր անշարժ մնալով իրենց ասիական անփոփոխ ձևերի մեջ՝ սառեցին, բարացան այդ անշարժության մեջ և իրանց կորցրած լինելով առաջադիմելու որևէ ընդունակություն, միևնույն ժամանակ ամենամեծ խոչընդոտներ էին դնում հայ անհատի մտավոր, ազատ, մարդավայել, քաղաքակրթական զարգացմանը։ Ուրեմն «...ում որ թանկ է մարդկային ոգու ազատությունը,— գրում է Արծրունին,— պետք է այնքան բաղություն ունենա, որ պահանջի մարդկային հոգեկան, մտավոր և բարոյական ազատ զարգացումը այդ ճնշող, կաշկանդող, խեղդող, դերող հաստատությունների արմատական վերանորոգությունը»։

Պահանջվում է ոչ թե պարզապես վերանորոգություն՝ բայց առ բաղ. այլ արմատական վերանորոգություն։

Բնութագրելով հնի և նորի պայքարը Արծրունին գտնում է, որ հինը սովորաբար ավելի ուժեղ է նոր զարգանալ սկսող հասարակության մեջ։ Հինը ունի իր տրադիցիաները, որոնք ամրապնդվել և ավանդության ուժով անցել են հետագա սերունդներին։ Հին սերունդը իր ճնշման և հաստատման մեջ վարպետացել է, յուրացրել է բոլոր անհրաժեշտ ձևերը, եղանակները, այն ինչ նոր սերունդը միայն նոր սկսելով իր և առհասարակ մարդկային իրավունքների պաշտպանությունը, անփորձ է և թույլ։ Նվ ընդհանրապես ավելի հեշտ է ճնշել ու հաստատել, քան թե մարդու իրավունքները և անկախությունը պաշտպանել։ Այդ դառն, անհերքելի ճշմարտություն է բոլոր դասակարգային հասարակությունների համար։

«Առաջադիմությունը կարող է ծնվել մի միայն քննադատությունից, ինքնաքննությունից, կրիտիկական, մտրակող ուղղությունից։

Իսկ շովինիստական ուղղությունը, որ իրան նպատակ է դնում ամեն բան ինչ «մերն» է, թեկուզ այդ բանը հին, անպետք, փտած լինի, անպատճառ պահվել... միայն ժամանակավորապես կարող է գոյություն ունենալ»։ Նույն տեսակետի վրա կանգնած էր նաև Մաշֆին։

Արծրունու իսկ բառերով ասած «մտրակող ուղղությունը», «ինքնաքննությունը» ուժի, առողջության նշան է. «...այն ազգը, որ իրան բարոյապես բավական զորեղ է զգում, երբեք հարկավորություն չունի թաքցնել իր պակասությունները օտարի առաջ»։

Արծրունին ծաղրում է մեղվականներին, որոնք զբաղված էին միայն մեր «ոսկե դարը» գրվատելով ու դաստիարակության նյութ շինելով, հայի անցյալի քաջությամբ, ազնվությամբ սրանչանալով։ Նրանք աչք փակեցին ներկայի նկատմամբ, քննադատական հայացք չունեցան անցյալի վերաբերյալ, ցնորքների գիրկն ընկան, չնկատեցին, որ այժմ հայը ստրուկ է, հարստահարող է, ասասեր է, ասում է Արծրունին։

Արծրունու կարծիքով պատմագրականների բարոյականության քարոզը և հարտասանական մեթոդը մեր երկիրն անցավ միջնադարյան Եվրոպական սխոլաստներից։ Սխոլաստները ամենուրեք, չլինելով հետազոտողներ, ուրեմն և գիտական մարդիկ, իրենց նվիրում են բարոյի, որովհետև «...գիտությունից զուրկ գլուխը միշտ հակումն ունի դեպի քարոզը»[37]։

[34] Նույն տեղում, № 140, 1888։
[35] Նույն տեղում, № 231, 1882։
[36] Նույն տեղում, № 30, 1873։
[37] Նույն տեղում, № 41, 1872։

«Մի ազգի հասարակական և բաղաքական վերածնությունը,— գրում է Արծրունին,— միշտ սկիզբ է առնում գրականական այն ձևից, որ անվանում են՝ ինքնահանություն»[38]։ Ռուսաստանի վերածնությունը սկսվում է մտրակող Գոգոլից, Ֆրանսիայինը՝ Վոլտերից, Գերմանիայինը՝ Հայնից,— ասում է Արծրունին։

Հայ իրականության մեջ ինքնաքննությունը, ըստ Արծրունու, սկիզբ առավ Հայոց խնդիրն հարուցվելուց քիչ առաջ և «եթե մեր ազգն ունի կյանք և ապագա, թո՛ղ գրականությունը շարունակի այդ ուղղությանը հետևելու»[39]։

Մենք նկատեցինք, որ Արծրունին պահանջում է ոչ միայն վերանորոգություն, այլև արմատական վերանորոգություն, երբ հին տեղի չի տալիս նորին «Արմատական վերանորոգության» իր այդ թեզը Արծրունին չտարածեց առհասարակ, ամբողջ հասարակության վրա. նա սահմանափակվեց ազգային ազատագրական պայքարի, կոնկրետ կերպով՝ Թուրքահայության ազգային ազատագրության շրջանակներում։ Եվ Արծրունին իրոք առաջադրեց իրագործությունը փոխելու համար արմատական միջոց։ Երբ սլավոնական ժողովուրդները — Թուրքական բարբարոսության դարավոր ոճիրը—ազգային ազատագրության դրոշը բարձր ծածանելով մարտնչում էին բռնակալության դեմ՝ հանուն անկախության ու ազատության, բռնակալության երդվյալ թշնամի՝ հումանիստ, ազատարաձգ Արծրունին հիացած նրանց պայքարով, քարոզեց հայերին՝ ի դեմս Զապադանց բարձր գնահատելով ժողովուրդների խաղաղ, կուլտուրական զարգացումը, ատելով ամեն տեսակի նվաճողական պատերազմները, ատելով նվաճող բռնակալ զորավարներին, մեղադրելով ժողովուրդներին, որոնք արյան են կանգնեցնում հազարների և միլիոնների արյունը թափող զորավարներին, կշտամբելով նաև իրեն այնքան սիրելի Հենրիխ Հայնեին, որ խունկ էր ծխում Նապոլեոն Բոնապարտին, նա ափսոսանքով նշում է, որ 19-րդ լուսավորված դարում ազատությունը կարելի է ձեռք բերել միայն և միայն զինավորված կովով, ուժով ու արյունով, այնինչ հայերը կարծում են, թե խաղաղ աշխատանքով, կուլտուրական առաջադիմությամբ կարող են ազատվել բարբարոսությունից ու կամայականությունից։ «Դարավոր տանջանքներով, ամենօրյա աշխատանքով, կուլտուրական խաղաղ կռվով, տոկուն կերպով մարտնչում են հայերը բարբարոսության և կամայականության, տգիտության և ֆանատիկոսության, մի խոսքով բռնավորության դեմ։ Գուցե հայերին վիճակված է,— իրոնիայով ասում է Արծրունին,— իրենց բռնած ընթացքով ոչնչացնել այն ժամանակակից բարոյական սկզբունքը, որ մեր լուսավորված տասն և իններորդ դարում՝ դեռևս տիրապետում է Եվրոպայում, որ լուսավորված աշխարհի սկզբունքն ու դեմքն է. «Je minsurge, done je suis»— Ես ապստամբում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ։ Բայց հայերը կարծես ասում են. «Ես աշխատում եմ, ես տանջվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»։ Ահա կարծես հայերի նշանաբանը»[40]։ Կարող է թվալ, որ Արծրունին բռնությունը, զինավորված կռիվը, ապստամբությունը, մի խոսքով պատերազմը, հասարակության, ազգերի զարգացման մշտական և նորմալ պայման է համարում։ Բնավ՝ ոչ։ Նա ցավով և ափսոսանքով է նշում զինված կռվի անհրաժեշտությունը։ «Ցավալի է, բայց

[38] Նույն տեղում, № 123, 1888։

[39] Նույն տեղում։

[40] Դր. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը. Թիֆլիս 1894, էջ 38։

այդպես է. միայն զենքը, արյունը, բռնի ուժը, այդ հնացած միջոցները մեր լուսավորված դարում դին ունին մի ազգության գոյության մասին վկայելու»[41]։ Մարդկության առաջընթացը պայմանավորվում է խաղաղ աշխատանքով, տնտեսական, կուլտուրական, մտավոր աշխատանքով, մարդկանց կյանքի գոյության համար նյութական բարիքներ արտադրելով։ Առաջադիմության համար անհրաժեշտ է թեկուզ «քայլ առ քայլ բարվոքել իր նյութական գրությունը»,— ասում է Արծրունին 1891 թ., որովհետև «մի ազգի տնտեսական կյանքից կախված է նրա մտավոր և բարոյական կացությունը»[42]։ Խաղաղ, անընդմեջ տնտեսական, մտավոր, բարոյական զարգացումը գլխավոր պայմանն է մի հասարակության, մի ազգի գոյությունը պահպանելու, նրա պրոգրեսը շարունակելու համար ընդհանրապես, բայց ոչ միշտ։ Լինում են մոմենտներ, երբ կոպիտ ուժը կարող է ընդհատել խաղաղ զարգացումը, իսկ մարդկանց ստրկացնել, նույնիսկ այն դեպքում, երբ կոպիտ ուժի կրողները իրենք գտնվում են զարգացման բարձր աստիճանի վրա։ Ուրեմն գոյություն ունենալու համար անհրաժեշտ է տնտեսական, կուլտուրական «զենքի» հետ միասին ունենալ նաև պատերազմական, իսկական զենք, բռնությանը՝ բռնությամբ պատասխանելու համար։ «Մտավոր ուժի շնորհիվ կարելի է հաղթել միայն հետզհետե, անընդհատ, տոկուն աշխատանքով, բայց մի հայտնի ժամանակում բռնի ուժին դիմադրել մտավոր ուժը անհնարին է»[43], այդ հնարավոր է երբ ազգը տնտեսական, մտավոր ուժի հետ կունենա «մի հայտնի չափով և ֆիզիկական ուժ»[44]։ Նույն, 1878 թ. գրած «Գոյության համար կռիվ» առաջնորդողում Արծրունին գտնում է, թե ով իր բոլոր հույսը դնում է իր տնտեսական, մտավոր կարողության վրա, սխալվում է, անհրաժեշտության դեպքում պետք է հենվել նաև ուժի վրա։ 1879 թ. Արծրունին նկարագրելով հայերի օրհասական վիճակը, կանխագուշակում է, որ եթե իրադարձությունների ընթացքը չփոխվի, հայերը Թուրքահայաստանում կամ կոչնչանան, կամ կգաղթեն։ Երկու դեպքում էլ Թուրքահայաստանը կդադարի գոյություն ունենալուց։ Դժբախտաբար այդպես էլ եղավ։

Արծրունին, որպես ռեալիստ մտածող, ոչ թե ողբասացությամբ է զբաղվում, այլ ժողովրդին կոչում է ազատության, ազատագրական մաքրող պատերազմի։ Նա առաջարկում է իր այտերնատիվը՝ կամ մահ կամ ազատություն, քրովհետև «Ազատությունը չի կարելի սովորել ստրկության մեջ. միայն ազատությունը վարժեցնում է ազատության մեջ»[45]։

Հայերի հույսերի իրագործման ճանապարհին լուսավոր Եվրոպայի վրա հույս չէր դնում Գր. Արծրունին։ Նա խորապես հավատացած էր, որ Անգլիան, որի վրա «Մեղու Հայաստանին», «Նոր-դարը» նայում էին որպես ազատարարի, ստրկացնող է, ճնշող, շահագործող, գաղութացնող։

Արծրունին պայքարելով ճնշման, ստրկացման դեմ, ատելով բռնակալությունը, չէր լինում միայն իր ժողովրդի նկատմամբ ունեցած սիրուց։ Նրա համար ճնշումը, շահագործումը ատելի է ամենուրեք։ Նա դատապարտում է Անգլիայի գաղութային քաղաքականությունը ու նրա գաղութարարական պատերազմները բուերների, զուլուսների, աֆղանների և այլ ժողովուրդների դեմ,

[41] Գ. Ա., «Մշակ», № 138, 1880։
[42] Նույն տեղում, № 100, 1881։
[43] Նույն տեղում, № 192, 1878։
[44] Նույն տեղում։
[45] Նույն տեղում, № 74, 1879։ Ընդգծումը մերն է։ Ա. Բ.

դատապարտում է Հյուսիսային Ամերիկայի հարավային նահանգների ստրկատերերին, սուլթանական բռնակալությունը, դատապարտում է պահպանողական «Մեղու Հայաստանին», որը հանգես էր գալիս Անգլիայի գաղութարարական քաղաքականության պաշտպանությամբ ու ճնշված գաղութացվող ժողովուրդներին կոչ էր անում, խորհուրդ էր տալիս չդիմադրել, չկռվել, այլ խոնարհաբար ընդունել գաղութարարի լուծը, չդրգռել նրա բարկությունը, ընդունել նրա բերած «լուսավորությունը»։ «Մեղու Հայաստանին» իր խմբագրական հոդվածում գովեստի, քաջալերանքի խոսքեր է շռայլում աֆղան ժողովրդի վրա թնդանոթներից կրակող, գյուղեր ամայացնող, ազատասիրության ու անկախության թշնամի անգլիական բանակին։ «Անգլիական զորքերը քաջ են»,—գրում է թերթը և խորհուրդ է տալիս Անգլիային խոհեմաբար վարվել՝ «ապահովելով յուր շահերն ավելի ամուր կերպով», ավելորդ չափով չդրգռել աֆղաններին, չխլել նրանց անկախությունը «ներքին վարչության մեջ», իսկ աֆղաններին՝ «աչտվել վիճակի հետ և ընդունել Անգլիայից իրանց ապագա կառավարության ձևն և իշխանը...»։ Թե ովքեր են գաղութարարները պարզ է, բայց ովքե՞ր են պահպանողականները որոնք դեմ են թուրքահայ ժողովրդի ազատությանը, անկախությունն և ազատությունն նվաճելու համար, ովքե՞ր են հայ ժողովրդին խորհուրդ տալիս համակերպվել իրենց վիճակի հետ. այդ բացատրում է Արծրունին։

Պահպանողականությունը որպես իդեոլոգիա, Արծրունու կարծիքով, արտահայտում էր ինչպես մեզ մոտ, այնպես էլ այլուր, շահագործող, հարստահարող դասակարգերի շահերն ու նկրտումները։

Դր. Արծրունին խոսելով Հայաստանի վրա Անգլիայի տիրապետություն հաստատելու ծրագրի մասին, դատապարտում է այն, գտնելով, որ դրանից ոչ միայն չի օգտվի հայ ժողովուրդը, այլև անդառնալիորեն կվնասվի։ Անգլիան ոչ միայն ազատություն չի բերի, այլև կաշխատի արմատացնել բռնությունն ու շահագործումը, ինչպես նա այդ արել է իր մյուս գաղութներում. Հայաստանը կդարձնի մի նոր Հնդկաստան, կգտի «...ուժ տալ ժողովրդի հարուստ, հարստահարող, տիրող, ուրեմն պանսպանողական դասակարգերին՝ ի վնաս ժողովրդի հարստահարվող մեծամասնության»[47]. նա կաշխատի իրեն հենարան ստեղծել նվաճված Հայաստանում և կհենվի հարուստ, հարստահարող դասակարգերի վրա, նրանց նորանոր արտոնություններ ու իրավունքներ շնորհելով՝ իր տիրապետությունն այնտեղ ամուր դարձնելու համար։

Անգլիան նվաճելով Հայաստանը, կգտի «...ստեղծել արվեստական կերպով մի ազնվական, արիստոկրատական դասակարգ, որպեսզի հեշտությամբ կարողանա կառավարել երկիրը և երկրի հարստահարող պանսպանողական տարրի մեջ մի հաստատ նեցուկ գտնեն իրանց քաղաքականության համար»[48]։ Անգլիան ինքը կառավարվում է պահպանողական դասակարգերի կողմից, այնտեղ ժողովուրդը իրավազուրկ է ու ճնշված, շահագործվում է ու աղքատ է։ «Պարզ է, որ այդ տեսակ պետությունը միշտ հիմնվում է ժողովրդի պահպանողական տարրերի վրա։ Ժողովրդի ստորին դասի մեծամասնության իրավունքը գրեթե ոչինչ չէ այդ տեսակ պետության մեջ»[49]։

---

[46] «Մեղու Հայաստանի», № 80, 1879։

[47] Դ. Ս., «Մշակ», № 204, 1878։ Ընդգծումը մերն է Ա. Բ.։

[48] Նույն տեղում։ Ընդգծումը մերն է Ա. Բ.։

[49] Նույն տեղում։

Հին սերունդը, որի դեմ Արծրունին կռվում է իր ամբողջ գիտակցական կյանքի ընթացքում, ոչ այլ որ է, քան շահագործող, հարստահարող պահպանողական դասակարգը, որը «պինդ կանգնած է իր մի անգամ ընտրած սկզբի վրա՝ անշեղ, բռնադատել, հարստահարել, ոչնչացնել, աչքի առաջ ունենալով միայն իր անձնական օգուտը, վայելչությունը, շահը... Նա հաստատ բայլերով և ուղիղ առաջ է գնում իր մի անգամ ընտրած ճանապարհով»[50]։

Պահպանողականության, հին սերնդի բնութագիրը տրված է այնքան հստակ կերպով, որ մեկնաբանությունների համար տեղ չի մնում։

Գր. Արծրունին ավելի առաջ է գնում նա չի բավարարվում լոկ հայերին ապստամբության կոչելով, այլ միաժամանակ և դասակարգային պայքարի բարդ է կարգում բոլոր հարստահարողների և շահագործողների դեմ, անկախ նրանց ազգային պատկանելիությունից։ Արծրունու կարծիքով Թուրքահայաստանում բազում տանջանքներ են կրում ոչ միայն հայերը և ոչ բոլոր հայերը։ Շահագործվում ու տառապում են նաև թուրք, քուրդ, ասորի, հույն և այլ ժողովուրդները։ Այդ տառապող ժողովուրդները որպեսզի ազատվեն, պետք է միանան (Թուրքահայաստանում) ու միասին պայքարեն թուրք, քուրդ, հայ և այլ ազգերի կալվածատերերի, բեկերի և առհասարակ շահագործողների, պահպանողական, հարստահարող դասակարգերի դեմ։ Արծրունին ազգը, տվյալ դեպքում հայ ազգը, միատարր չի համարում։ Սոցիալական անհավասարությունը, հարստահարում ու շահագործում գոյություն ունի հայ ազգի մեջ։ Հայ ազգի ազատ ու հարուստ դասակարգերը այնքան խորթ են իրար, որ նրանց մեջ չկա ոչ մի բարոյական կապ, ոչ մի համերաշխություն, «կարծես թե նրանք երկու միմյանց հակառակ բանակներ են, երկու տարբեր ազգություններ են»[51]։ Այդպես են և ուրիշ ազգերը, այսպես է և անգլիական ազգը։ Արծրունին դատապարտում է հայ բուրժուային (Կ. Պոլսի), կալվածատիրոջն ու կղերին՝ որպես շահագործողների ու հարստահարողների, որոնք միայն իրենց մասին են մտածում և խորթ են ժողովրդի շահերին։ Արծրունին գալիս է այն եզրակացության, որ հայը միայնակ զենքով էլ չի կարող ազատություն նվաճել, նա պետք է միանա մյուս ազգերի ճնշված մասսաների հետ, նրանց հետ միասին պայքարի և նրանց հետ էլ ազատվի բռնությունից։ «...Հայի թշնամին ոչ թե թուրքն է կամ քուրդը, ոչ թե ուրիշ ազգություններին պատկանող հայաստանցի բնակիչը, այլ երկրի հարուստ դասակարգը։ Երկրագործ հայը, երկրագործ թուրքը, ասորին և քուրդը միևնույն դրության մեջ են, բոլորն էլ համերաշխ շահեր ունեն. իսկ նրանց թշնամին է ոչ թե քուրդ հովիվը, բայց քուրդ կալվածատերը, քուրդ բեկը, նրանց թշնամին է հայ վաշխառու վաճառականը և թուրք մանր պաշտոնյան։ Ուրեմն, բոլոր հայաստանցիները՝ հայ, քուրդ, եզիդի, թուրք, ասորի, և այլն, պետք է միանային, պետք է հասկանային իրենց համերաշխությունը, պետք է ըմբռնեին, որ նրանց ընդհանուր թշնամիներն են՝ կալվածատերը, վաշխառուն, պաշտոնյան»[52]։ Այսպես է գրում Գրիգոր Արծրունին «Մեր հոդվածներ» բնորոշ վերնագիրը կրող առաջնորդողում։ Նման շատ մտքեր նա արտահայտել է ավելի առաջ։ 1882 թ. նա գրում է. «Հիմա նոր են սկսում հասկանալ, որ շատ անգամ հայը ավելի մեծ թշնամի է հային, քան թե քուրդը և

---

[50] Նույն տեղում, № 20, 1875։

[51] Նույն տեղում, № 142, 1878։

[52] Նույն տեղում, № 1, 1883։

թուրքը, նայելով թե որ դասակարգին է պատկանում հայը։ Հայաստանցի թուրք երկրագործը, քուրդ հովիվը կամ քուրդ մշակ բանվորը չեն կարող երկրագործ, բանվոր, արհեստավոր հայի թշնամիներ լինել, քանի որ նրանց դիրքը, նրանց հարաբերությունները դեպի հայ վաշխառուն, դեպի թուրք տեղական պաշտոնյան, դեպի քուրդ բեյը միատեսակ են։

Հայաստանցի հայ, թուրք և քուրդ ստորին դասի մարդիկ նույն չափով ճնշվում են հայ վաշխառուից, թուրք պաշտոնյայից և քուրդ բեյից, կամ քուրդ ավազակապետից։ Ուրեմն երկրագործ, բանվոր, մշակ, արհեստավոր թուրքի, հայի, քուրդի մեջ համերաշխություն, եղբայրություն հնարավոր է, քանի որ նրանց բոլորի վիճակը և շահերը մի են»[53]։

Պատահական է արդյո՞ք, որ Արծրունին Հայաստանի բնակիչ տարբեր ազգերի շահագործվող դասերին համերաշխության կոչ է անում՝ շահագործող դասակարգերի դեմ կռվելու համար, որպես միակ պայման Թուրքահայաստանի ազատագրման։ Ո՞չ։ Այդպիսի կոչը իր հիմքն ունի նրա աշխարհմբռնման մեջ։ Նրա կարծիքով, հասարակությունը չի կարող բարգավաճել, զարգանալ, երբ նա հիմնված է հակադիր-շահագործող և շահագործվող դասակարգերի հարաբերության վրա։ Դեռ 1873 թ. նա գանում էր, որ Հռոմի կործանումն անխուսափելի էր, որովհետև այն հիմնված էր մի բանիսների արտոնության, իսկ մեծ մասի ստրկության վրա»[54]։

Արծրունին համաձայն չէ եվրոպական և ռուսական մամուլի հետ, որը թուրքերի և հայերի հարաբերությունները բացատրում էր քուրդերի վայրենի լինելով, և գտնում է, որ ժողովուրդների, երկրների քաղաքական վիճակը լավ բմբռնելու համար «նախ պետք է դիտել և ուսումնասիրել նույն երկրի տնտեսական վիճակը»[55]։ Այդպիսի հայացքը նույնպես պատահական չէ։ Արծրունին, որ փիլիսոփայության հիմնական հարցում մատերիալիստ է, այդ մատերիալիզմը շատ անգամ կիրառում է նաև հասարակության նկատմամբ։ Նրա կարծիքով մարդիկ ազատ հայեցողությամբ չեն կերտում իրենց պատմությունը, նրանք իրենց գործունեության մեջ առաջնորդվում են իրենց նյութական պահանջներին, գոյության պայմաններին բավարարություն տալու նկատառումներով, և ամեն տեսակի իդեալներն ու բարոյական հասկացությունները խարսխված են ձեռք բերված տնտեսական պայմանների որոշակի աստիճանի վրա։ «Մարդկությունն այնպես է ստեղծված,— գրում է Արծրունին,— որ նրա մեջ իդեալական կողմը առհասարակ շատ քիչ է զարգացած և շատ ուշ է զարգանում։ Մարդիկ մեծ մասամբ մեծ թե փոքր գործեր են անում դեպի լավը, կամ դեպի վատն են ընթանում, դրդված լինելով դրական, նյութական, կենսական պահանջներից»[56]։ Նույն, 1881 թ., թուրքական բարբարոսությունից Հայաստանի ժողովուրդների ազատագրության ճանապարհին որպես առաջին քայլ նա առաջարկում է կազմակերպել և գլխավորել բոլոր ազգերի համերաշխության գործը՝ նրանց նյութական հարստահարությունից ազատ պահելու համար, որովհետև «...մարդկանց միմյանց մեջ համերաշխության զգացմունքը ծնվում է նախ և առաջ և գլխավորապես նյութական հողի վրա, իսկ բարոյական համերաշխության զաղափարներն ավելի ուշ են հասկացվում»[57]։

[53] Նույն տեղում, № 103, 1882։
[54] Նույն տեղում, № 9, 1873։
[55] Նույն տեղում, № 100, 1889։
[56] Նույն տեղում, № 82, 1881։
[57] Նույն տեղում, № 34։

1877—78 թթ. Ռուս-տաճկական պատերազմից հետո սաստիկ սով առաջ եկավ Թուրքահայաստանում և բնականաբար առաջին հերթին աղետի մատնվեցին աշխատավոր, չքավոր գյուղացիները։ Նրանք սկսեցին ամենացածր դներով ծախել իրենց հողերը՝ սովից փրկվելու համար։ Գնողները մեծ մասամբ հայ կալվածատերերն ու վաշխառուներն էին։ Արծրունին այս դեպքումն էլ հանդես եկավ աշխատավոր գյուղացուն պաշտպանելու կոչով. նա առաջարկեց բարեգործական ընկերություն հիմնել և նրա հավաքած փողերով գնել լժան ծախվող հողը և այնուհետև ձրիորեն բաժանել աշխատավոր գյուղացիներին հողը ունևոր վաշխառուներից օտարել։ Դա հողը՝ աշխատավորին, հողը՝ մշակողին պատկանելու դաղափարի միակ արտահայտությունը չէ։ Նա ընդհանրապես այդ տեսակետին էր. բայց անհնարին է համարում տիրող հանգամանքներում Ռուսահայաստանում այդ իրականացնել. դրա համար էլ բռնում էր այլ ուղի։ Մահից քիչ ժամանակ առաջ. 1892 թ., Արծրունին հանդես եկավ «Հողի հարցը» առաջնորդող հոդվածաշարով և առանց երկմտության պաշտպանեց հողի հարցի նալբանդյանական լուծումը, այն համարելով «կատարելապես արդար. իրավացի և օգտավետ» միայն թե «տարաժամ»։ Հողի համայնացման մասին «Հյուսիսափայլի» Նալբանդյանի «...այդ մտքերը տարաժամ են եղել, քանի որ երկրի տնտեսական հանգամանքները միջոց չէին տալիս հայտնած մտքերն իրագործելու, որքան և այդ մտքերը գեղեցիկ, ճշմարիտ և օգտավետ եղած լինեին... Պետք է որ հասարակաց կարծիքը հասունանա, որպեսզի մտքերն ըմբռնվեն։ Այդ բավական չէ. պետք է հանգամանքները փոխվեն, բարվոքվեն, ինքը կյանքը հասունանա, որպեսզի իրագործվի այն, ինչ որ քարոզում էր (Նալբանդյանը—Ա. Բ.) քսան և հինգ տարի առաջ, այն ինչ որ կատարելապես արդար, իրավացի և օգտավետ է, բայց մինչև այժմ բնավ անիրագործելի էր»[1]։ Արծրունին որպես դարավոր հանգամանք նշում է այն, որ գյուղացին իրոք հող չունի, հողը պատկանում է կամ պետությանը, կամ բեկին, կամ մելիքին, կամ վանքին, իսկ դա մամուլի խոսքով չի վերանա։

Արծրունին հայ ժողովրդի դասակարգային բաժանվածության պատկերը նկարագրում է նաև Ռուսահայաստանում. Թիֆլիսում, հայ գյուղում, թեև այստեղ նա պայքարի կոչ չի անում։

Բնորոշն այն է, որ Գր. Արծրունին հասարակության զարգացման էվոլյուցիոն տեսակետի վրա կանգնած էր իր գործունեության սկզբնական շրջանում, առավելապես մինչև Ռուս-տաճկական պատերազմը, իսկ ավելի ուշ սոցիալական խնդիրները շեշտված արտահայտություն են ստանում՝ էվոլյուցիայից անցնում է ռևոլյուցիային։

Միայն կլիներ, իհարկե, այդպիսի անցումը պատկերացնել առանց զիգզագների ու հակասությունների, որոնք այստեղ մենք ցույց տալ չենք կարող՝ տեղի սղության պատճառով. բայց մի բան անկասկած է, որ բռնության, պահպանողական դասակարգերի, այսինքն՝ շահագործող դասակարգերի նկատմամբ ատելությունը, բարձր հումանիզմը, զարգացման առաջընթացի համար երբոք պայքարը, որոնք նա երևան բերեց հենց իր գործունեության սկզբում, չէին կարող չհասցնել և հասցրին բռնության դեմ բռնությամբ պայքարելուն, շահագործողների դեմ շահագործվողների դասակարգային պայքարի կոչ անելուն, թեև մեկ, թուրքահայության ազգային ազատագրական պայքարի բնագավառում միայն։

[1] Նույն տեղում. № 130, 1892։